ՆԱԽԱԳԻԾ
Երկրորդ ընթերցում
Լրամշակված տարբերակ

Կ-062-11.10.2021-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» 2006 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-233-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածում «ճանապարհային թերթիկ» եզրույթը սահմանող պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություններ հետևյալ բովանդակությամբ.

«***երթուղային թերթիկ***՝ ավտոկայարանային կամ երթակարգավարական ծառայություն մատուցող կազմակերպության կողմից տրվող, կանոնավոր ուղևորափոխադրում իրականացնող ավտոբուսի ճանապարհային թերթիկին կցվող փաստաթուղթ, որը ներառում է ավտոտրանսպորտային միջոցի մակնիշը, հաշվառման համարանիշը, ճանապարհային թերթիկի համարը, տրման ամսաթիվը, փոխադրման երթուղին և փաստացի կատարված երթերի՝ սկզբի ու ավարտի ժամերը.

էլեկտրոնային երթակարգավարական ծառայություն՝ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների աշխատանքի կարգավորման, հաշվառման և վերահսկողության աշխատանքների երթակարգավարական կառավարման միասնական էլեկտրոնային ավտոմատացված համակարգ.»:

Հոդված 2. Օրենքի 11-րդ հոդվածը լրացնել նոր 8-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.

«8. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումների իրականացման ընթացքում երթուղային ցանցը կազմակերպող համապատասխան մարմինը տրանսպորտային միջոցների աշխատանքի կարգավորումը, իսկ տրանսպորտի բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը փոխադրումների վերահսկողության աշխատանքները կարող են իրականացնել էլեկտրոնային երթակարգավարական ծառայության միջոցով: էլեկտրոնային երթակարգավարական ծառայության ավտոմատացված համակարգերը ստեղծում են սույն օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված երթուղային ցանցը կազմակերպող մարմինները, իսկ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը Հայաստանի Հանրապետությունում կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղիների վերաբերյալ տեղեկատվությունը ստանում է

էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային երթակարգավարական ծառայության ավտոմատացված համակարգերի տեղեկատվական շտեմարաններից: Էլեկտրոնային երթակարգավարական ծառայությունների մատուցման պահանջները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:

Հոդված 3. Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի՝

1. «բ» կետում «ճանապարհային թերթիկի» բառերից հետո լրացնել «կամ դրան կից երթուղային թերթիկի» բառերը:

Հոդված 4. Օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի «ե» կետի «ճանապարհային» բառից հետո լրացնել «ու երթուղային» բառերը:

Հոդված 5. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից երեք ամիս հետո, բացառությամբ օրենքի 2-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

ՆԱԽԱԳԻԾ

Երկրորդ ընթերցում

Կ-062-11.10.2021-ՏՀ-011/01

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ~~

«ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ~~ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ~~ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ 2006 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-233-Ն օրենքի (այսուհետ ~~ե~~Օրենք) 4-րդ հոդվածում «ճանապարհային թերթիկ» եզրույթը սահմանող պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություններ հետևյալ բովանդակությամբ.

«***երթուղային թերթիկ***՝ ավտոկայարանային կամ երթակարգավարական ծառայություն մատուցող կազմակերպության կողմից տրվող, ~~և~~կանոնավոր ուղևորափոխադրում իրականացնող ավտոբուսի ճանապարհային թերթիկին կցվող փաստաթուղթ, որը ներառում է ավտոտրանսպորտային միջոցի մակնիշը, հաշվառման համարանիշը, ճանապարհային թերթիկի համարը, տրման ամսաթիվը, փոխադրման երթուղին և փաստացի կատարված երթերի՝ սկզբի ու ավարտի ժամերը.

էլեկտրոնային երթակարգավարական ծառայություն՝ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների աշխատանքի կարգավորման, հաշվառման և վերահսկողության աշխատանքների երթակարգավարական կառավարման միասնական էլեկտրոնային ավտոմատացված համակարգ.»:

Հոդված 2. Օրենքի 11-րդ հոդվածը լրացնել նոր 8-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.

«8. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումների իրականացման ընթացքում երթուղային ցանցը կազմակերպող համապատասխան մարմինը տրանսպորտային միջոցների աշխատանքի կարգավորումը, իսկ տրանսպորտի բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը փոխադրումների վերահսկողության աշխատանքները կարող են իրականացնել էլեկտրոնային երթակարգավարական ծառայության միջոցով: Էլեկտրոնային երթակարգավարական ծառայության ավտոմատացված համակարգերը ստեղծում են սույն օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված երթուղային ցանցը կազմակերպող մարմինները, իսկ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի բնագավառում վերահսկողություն

իրականացնող տեսչական մարմինը Հայաստանի Հանրապետությունում կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղիների վերաբերյալ տեղեկատվությունը ստանում է էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային երթակարգավարական ծառայության ավտոմատացված համակարգերը տեղեկատվական շտեմարաններից: ~~Էլեկտրոնային երթուղային թերթիկների կիրառման և~~ էլեկտրոնային երթակարգավարական ծառայությունների մատուցման պահանջները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:

Հոդված 3. Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի՝

1. «բ» կետում «ճանապարհային թերթիկի» բառերից հետո լրացնել «կամ դրան կից երթուղային թերթիկի» բառերը:

Հոդված 4. Օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի «ե» կետի «ճանապարհային» բառից հետո լրացնել «ու երթուղային» բառերը:

Հոդված 5. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից երեք ամիս հետո, բացառությամբ օրենքի 2-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՆԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-062-11.10.2021-ՏՀ-011/1), «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>(Կ-062[1]-11.10.2021-ՏՀ-011/1), «ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> (Կ-062[2]-11.10.2021-ՏՀ-011/1) ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՕԵՐՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> (Կ-062[3]-11.10.2021-ՏՀ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ					
1.	**ՀՀ կառավարություն**	վերնագիր	Նախագծի վերնագրից հանել երկրորդ «Հայաստանի Հանրապետության» և «ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառերը	Ընդունվել է	Ընդունվել է
2.	**ՀՀ կառավարություն**	1-ին հոդված	1-ին հոդվածից «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել	Ընդունվել է	Ընդունվել է
3.	**ՀՀ կառավարություն**	1-ին հոդված	«(այսուհետ օրենք)»	Ընդունվել է	Ընդունվել է

			ձեւակերպումը փոխարինել «(այսուհետ՝ Օրենք)» ձեւակերպմամբ		
4.	**ՀՀ կառավարություն**	1-ին հոդված	«ճանապարհային թերթիկ» բառերից հետո լրացնել «եզրույթը սահմանող» բառերը	Ընդունվել է	Ընդունվել է
5.	**ՀՀ կառավարություն**	1-ին հոդված	«և» բառը փոխարինել «կանոնավոր ուղևորափոխադրում իրականացնող» բառերով	Ընդունվել է	Ընդունվել է
6	**ՀՀ կառավարություն**	2-րդ հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է Օրենքի 4-րդ հոդվածում լրացնել «երթուղային թերթիկ» եզրույթի սահմանումը, իսկ 2-րդ հոդվածով Օրենքի 11-րդ հոդվածում լրացվող նոր՝ 8-րդ մասով նախատեսվում է էլեկտրոնային երթուղային թերթիկի կիրառում: էլեկտրոնային երթուղային թերթիկի կցումը ճանապարհային թերթիկին հնարավոր չէ, եթե վերջինիս էլեկտրոնային տարբերակ նախատեսված չէ Նախագծով եւ ՀՀ օրենսդրությամբ:	Ընդունվել է	Ընդունվել է

			Առաջարկվում է հանել <<էլեկտրոնային երթուղային թերթիկների կիրառման և>> բառերը		
7.	**ՀՀ կառավարություն**	Նախագծին ավելացնել նոր նախագիծ	Ավելացնել նոր՝ «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին>> օրենքի նախագիծ	Ընդունվել է	Ընդունվել է
«Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ					
8.	**ՀՀ կառավարություն**	վերնագիր	Նախագծի վերնագրից հանել երկրորդ «Հայաստանի Հանրապետության» բառերը	Ընդունվել է	Ընդունվել է
9.	**ՀՀ կառավարություն**	1-ին հոդված	հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը	Ընդունվել է	Ընդունվել է
10.	**ՀՀ կառավարություն**	Նախագծին ավելացնել նոր նախագիծ	Ավելացնել նոր՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին>> օրենքի նախագիծ	Ընդունվել է	Ընդունվել է